դպրոցին Յովհաննու՝ շինօղի սուրբ տաճարիս և վարժեալ և ուսեալ ամենայն երաժշտական արուեստ ուսմանն ի վանքն»*։ Տարաբաղդաբար այս խօսքերը շատ քիչ են և անորոշ Թովմայի մանկութեան ուսման մասին պարզ և թանձրացեալ գաղափար կազմելու։ Բայց կարելի է կարծել, թէ շատ մեծ բան չպէտք է լինէր. Ժամագիրքը, Սաղմոս, Շարական, Աւետարան և Ժամերգութեան հետ կապուած երաժշտական ուսումն։ Նորա ուսուցիչ Յովհաննէս Մեծոփեցին նոյն վանքում «վարժեալ և ուսեալ» էր Նահապետ կրօնաւորի մօտ «զՍաղմոսն Դաւթի և զմանր ուսումն եկեղեցւոյ», և այդքանը բաւական էր համարուած քահանայական աստիճանի կոչուելու**։ Համեմատութեան այս ճանապարհով մօտաւոր գաղափար ենք ստանում նաև Թովմայի նախնական կրթութեան ծաւալի և բովանդակութեան մասին։

Ո՞ր թուականին է մտել նա վանք և ո՞րքան է տևել նորա նախնական կրթութեան այս շրջանը, միայն մօտաւորապէս կարող ենք որոշել։ Մենք կ՚տեսնենք, որ Թովմայի ուսման երկրորդ շրջանը Սուհարայի վանքում վերջացել է ՊԾԵ (=1406) թուին՝ Վարդան վարդապետի մահուամբ և տևել է 12 տարի***։ Այս թուից 12 տարի յետ հաշուելով՝ Մեծոփայ վանքի կամ նախնական կրթութեան վերջին տարին կընկնի ՊԽԳ (=1394) թուին։ Եւ յիրաւի այդ տարին Թովման դեռ ևս Յովհաննէս Մեծոփեցու մօտ էր, Լանկթամուրի երկրորդ արշաւանքի ժամանակ, որին ենթարկուեցան պատանի Թովման և նորա ուսուցիչ Յովհաննէս Մեծոփեցին Քաջբերունեաց գաւառի ժողովրդի հետ, և փախան Կոկովիտ գաւառի Դարա գիւղը։ Նոքա թէև վերադարձան շուտով, բայց հետևեալ տարին՝ Յուսուփի յարձակման ժամանակ՝ «Վարդապետն Յովհաննէս աշակերտօք իւրովք մաղապուրծ եղեալ, գնաց ի գաւառն Թրշտունեաց. զերկու ամ անդ դադարեաց»†։ Թովման այս փախստեան ժամանակ աշակերտների թուում չէր այլ ևս. ապա թէ ոչ կ՚յիշէր այդ մասին, ինչպէս ուրիշ դէպքերում։ Ահա Յովհաննէս վարդապետի այս երկամեայ փախստեան ժամանակ Թովման պէտք է անցած լինի Սուհարայի վանքը Սարգիս Սորբեցու մօտ ուսանելու։ Ուրիշ աղբիւրից էլ գիտենք, որ այս վարդապետն ևս Լանկթամուրի երկրորդ արշաւանքի ժամանակ փախել էր Լիմ ա-

---

* Նոր Նիւթեր. Ար. 743. (6).

** Մեծոփեցի. Պատմ. Լանկ. 54։

*** Մեծոփեցի. Պատմ. Լանկ. 41. 49—50. Նոր Նիւթեր. Կիրակոս Բանասէր. Ար. 744. (7)։

† Մեծոփեցի. Պատմ. Լանկ. 47. 49։